ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/19

ք. Երևան «21» 02 2020թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս Նախարարության գլխավոր քարտուղար Վ. Օհանյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 56 067 114 (հիսունվեց միլիոն վաթսունյոթ հազար մեկ հարյուր տասնչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8	Հասցե՝ Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող.
ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ Մասիս մ/ճ
Հ/Հ 900011001352	Հ/Հ՝ 2472900158630000
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ՝ 03804898
Վ. Օհանյան	Վ. Եղիազարյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«21» 02 2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	35811180/501	Հատուկ հանդերձանք և պարագաներ / Ամենօրյա համազգեստի լրակազմ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Տես հավելված 1.1	հատ	10098	23225400	2300	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	500	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվանից մինչև 31.03.2020թ
										1300	2-րդ եռամսյակ մինչև 30.06.2020թ
										500	3-րդ եռամսյակ մինչև 30.09.2020թ
2	18231600/501	Սվիտերներ / Մայկա կապույտ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Տես հավելված 1.1	հատ	1419	3263700	2300	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	500	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվանից մինչև 31.03.2020թ
										1300	2-րդ եռամսյակ մինչև 30.06.2020թ
										500	3-րդ եռամսյակ մինչև 30.09.2020թ
4	18811210/501	Ճտքավոր կոշիկներ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Տես հավելված 1.1	զույգ	12996	5198400	400	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	200	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվանից մինչև 31.03.2020թ
										200	3-րդ եռամսյակ մինչև 30.09.2020թ

5	18221300/501	Գլխարկով բաճկոններ / Ձմեռային բաճկոն	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Տես հավելված 1.1	հատ	10899	3509478	322	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	122	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվանից մինչև 31.03.2020թ
										200	3-րդ եռամսյակ մինչև 30.09.2020թ
6	18441160/501	Կեպիներ / Կեպի ձմեռային	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Տես հավելված 1.1	հատ	1788	575736	322	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	122	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվանից մինչև 31.03.2020թ
										200	3-րդ եռամսյակ մինչև 30.09.2020թ
11	18111200/501	Կոմբինիզոն աշխատանքային	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Տես հավելված 1.1	հատ	7248	20294400	2800	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	300	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվանից մինչև 31.03.2020թ
										1500	2-րդ եռամսյակ մինչև 30.06.2020թ
										1000	3-րդ եռամսյակ մինչև 30.09.2020թ

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247

Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Արարատի մարզ, ք. Մասիս 1 փողոց,
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մասիսի մ/ճ
Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 03804898

Վ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«21» 02 2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. **Ամենօրյա համազգեստ (լրակազմ)** - Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից և կեպիից (Նկար N 1): Գործվածքի մակերեսային խտությունը 215±5 գրամ/մ², բաղադրությունը՝ 49±2% պոլիէսթեր, 51%±2% բամբակ: Գործվածքի տեսակը՝ <Սարժա>, ներկման մեթոդը՝ <Ռեակտիվ>, գույնը՝ մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն):

Բաճկոնը՝ միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ սև գույնի երկկողմանի երիզաշղթայով: Օձիքը՝ 5+/-0,5սմ լայնությամբ, ծալովի, ուղղանկյունաձև կանգունակով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնի առաջնամասի կողային հատվածներում ներկարված են մեկական թեք գրպաններ՝ շղթայով փակվող, իսկ կրծքավանդակի մասում 2 ծավալուն գրպաններ՝ կափույրներով: Կափույրները փակվում են դարձերեսին և գրպանների վերնամասում մշակված կպչուն ժապավեններով: Բաճկոնի աստառացուն սև կամ մուգ փիրուզագույն մետաքսե գործվածքից:

Կրծքամասի գրպանների լայնությունը՝ 14սմ, երկարությունը՝ 16սմ, (շեղում +/-2սմ կախված համազգեստի չափսից) տեղակայված են կենտրոնական ուղղահայաց կարից 5-6սմ հեռավորության վրա: Կրծքամասի գրպանների կափույրների վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, կարվում են 12X2.5սմ չափով սև գույնի կպչուն ժապավեններ: Ձախ գրպանի կափույրի վրա տեղադրվում է 12.5X2.5 սմ չափով սև գույնի՝ վրան սպիտակ թելով ասեղնագործված «արյան կարգ» տարբերանշանը, իսկ աջ գրպանի կափույրի վրա 12.5X2.5սմ չափով սև գույնի՝ վրան սպիտակ թելով ասեղնագործված «MES OF ARMENIA» տարբերանշանը: Կրծքավանդակի ձախ գրպանի կենտրոնում՝ ստորին եզրակարից 2սմ բարձրության վրա ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորխորդանշանը՝ շրջանաձև, 8սմ տրամագծով:

Աջ թևքին՝ ուսագլխից 8սմ ներքև, ասեղնագործված է ՓԾ թևքի տարբերանշանը, ձախ թևքին՝ ուսամասից 3 սմ ներքև, ՀՀ եռագույնը կիսակլոր՝ ներքևում գրված «ՀԱՅԱՍՏԱՆ», որից 1 սմ ներքև ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում մշակված են 2 կամրջակներ և 2 փակօղակներ: Բաճկոնի կողային ստորին հատվածներում և թևքերի վերջավորություններում գործվածքը մշակված է 5-6սմ լայնության ռետինե ժապավեններով: Բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում՝ օձիքի միացման կարից 13սմ հեռավորությամբ, սպիտակ թելով, 4X2.5X0.7սմ (բարձրություն X լայնություն X հաստություն) չափի տառատեսակով ասեղնագործված է «ԱԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»:

Բաճկոնի և կեպիի վրա կատարվող բոլոր ասեղնագործման աշխատանքները կատարվում են լազերային <Jakard> եղանակով, պատկերների համաչափության պահպանմամբ և կցված նկարներին համապատասխան գունավորումներով:

Տաբատը՝ ազատթող փողքերով, առաջնամասում 2 կողային ներկարված գրպաններով, հետևի աջ կողմում ներկարված 14X14սմ չափի մեկ գրպանով: Գուլֆիկը շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով: Գոտին մշակված է 6 կամրջակով և գոտու կողային հատվածներում չափը կարգավորող 2 ռետինե ժապավեններով՝ 5+/-0.5սմ լայնությամբ: Համազգեստի միացման բոլոր կարերն իրականացվում են շղթայական փակ զույգ կարերով:

Կեպին աստառով, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են առնվազն 3մմ հաստության սոսնձային կտորից միջադրով: Հովհարը միջադրված է առնվազը 3մմ հաստության պլաստիկ, ճկվող միջադրով: Գլխարկահատակի կենտրոնում՝ ներսի կողմից, դրոշմվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում 6.5-7սմ: Կեպիի կողային մասերի կենտրոնում մշակված են մեկական անցքեր՝ օդափոխության համար, ասեղնագործված եզրակարերով:

Գլխարկաբոլորքի բարձրությունը ճակատային մասում սկսած 54 չափսից 7,5սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը սկսած 54 չափսից 8,2սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ (թույլատրելի շեղում +/-1մմ): Գլխարկաբոլորքի կենտրոնում մշակված է <<ԱԻՆ>> խորդրդանշանը՝ շրջանաձև, 56+/-1մմ տրամագծով, սև կտորի վրա ասեղնագործված: **Համազգեստի չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:**

Բաճկոնի և տաբատի ներսամասում մշակվում է խնամքի վերաբերյալ պիտակ՝ վրան նշված.

Արտադրողի անվանումը. Չափս-հասակը. Լվացքի մեքենայով կամ ձեռքով լվանալու ջրի ջերմաստիճանը մինչև 30°C:

Լվանալ գունավոր հագուստի համար նախատեսված լվացքի նյութերով:

Պարզաջրել գոլ ջրով, չմզել անհրաժեշտության դեպքում արդուկել ցածր ջերմաստիճանով:

Չ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ, ՍՊԻՏԱԿԵՑՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ. ՊԻՏԱԿԸ Չ՝ ՀԵՌԱՑՆԵԼ

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով, արկղում յուրաքանչյուր լրակազմը պոլիէթիլենային պարկով: Արկղերը և պարկերը պիտակավորված՝ պիտակի վրա նշված տեսականու անվանումը, քանակը, չափս-հասակը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Գլխարկներն առանձին արկղերում պետք է լինեն

չդեֆորմացված՝ առանձին շարվածքով: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից:

Նկար N 1



2. **Մայկա կապույտ** - Գործվածքը տրիկոտաժ, բաղադրությունը՝ 80+/-2% բամբակ, 20+/-2% արհեստական էլաստիկ մանրաթելեր, մակերեսային խտությունը՝ 170+/-10 գրամ, գույնը՝ մուգ կապույտ: Արտաքին տեսքը՝ ուղղիղ ձևածքով, կարճաթև, կլոր օձիքով՝ վզամասը մշակված տրիկոտաժե էլաստիկ մանժետով: Ձախ թևին ասեղնագործված է ՀՀ եռագույն դրոշը՝ կիսակլոր, ներքևում գրված <<ՀԱՅԱՍՏԱՆ>>, իսկ մեջքի կենտրոնական մասում՝ օձիքից 13+/-1սմ հեռավորությամբ, սպիտակ թելով, 4X2.5X0.7սմ (բարձրություն X լայնություն X հաստություն) չափի տառատեսակով ասեղնագործված է «ԱԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»: Ծոծրակամասի կենտրոնում՝ օձիքի եզրակարի տակից, կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: **Չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:**

Փաթեթավորումը հակերով՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Պարկը պիտակավորված՝ վրան նշված տեսականու անվանումը, չափսը, արտադրողի անվանումը:

4. Ճտքավոր կոշիկներ - Բնական սև կաշվից, անջրանցիկ ծածկույթով, կազմված կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին զոտուց, ճիտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից և տակացուից: Կոշկերեսի և հետնամասի կաշին 2-ից 2.2մմ հաստության, իսկ լեզվակի ճիտքերին միացող հատվածները և ճիտքերը 1.8-ից 2մմ հաստության կաշվից, քթամասը և կրունկամասը կոշտ: Քթամասում և կրունկամասում ներսից միջադրվում են թերմոպլաստով՝ որն ապահովում է մինչև 50 Ջոուլ էներգիայով հարվածից պաշտպանվածություն: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կարակցված, առնվազն 2մմ հաստության բնական հումքից, պադոշից, և կոշիկի համար նախատեսված 2մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կոշիկի ներսի հատվածը մշակվում է բնական հումքով (սպիլկայով,կաշվի երկրորդական շերտ)0.8-1.2մմ հաստության: Լեզվակը՝ փակ փականով: Կոշիկի ճտքերի բարձրությունը՝ 20-23սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներսի մասով հիմնական ներդիրից մինչև ճտքի վերին եզրը:

Տակացուն՝ միաշերտ, մաշվածադիմացկուն պոլիուրետան, յուղակայուն, նախատեսված -25°C-ից +80°C-ի պայմաններում կրելու համար: Տակացուի վրա առկա է դրոշմ յուղակայունության վերաբերյալ: Տակացուն համաձուլման եղանակով միանում է կոշկերեսին՝ դառնալով մեկ ամբողջություն: Կոշիկը ոտքին հարմարեցվում է ճիտքերի վրա ամրացված մետաղյա օղակներով անցնող կոշկաքուղերով: Կոշկաքուղերը բիմիական մանրաթելից արտադրված 4-5մմ տրամագծով և 150-160սմ երկարության քուղերով: Կոշիկի միջադիրը՝ ստելկան, 2.0մմ հաստության անտիսեպտիկ նյութից: Կոշիկը տակամասում ունի դրոշմ՝ վրան նշված չափսը, իսկ ճիտքերի վրա նշված արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Կոշիկի չափսերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից՝ մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

Փաթեթավորումը՝ գործարանային, ստվարաթղթե արկղերով, պիտակավորված: Պիտակի վրա նշված են՝ տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը:

5. Զմեռային բաճկոն – Գործվածքի մակերեսային խտությունը առնվազը 215 գրամ/մ², բաղադրությունը՝ 49±2% պոլիէսթեր, 51±2% բամբակ, գործվածքի տեսակը՝ <Սարժա>, ներկման մեթոդը՝ <Ռեակտիվ> մշակված անջրաթափանց ծածկույթով, գույնը՝ մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն):

Բաճկոնի առաջամասի և թիկունքի ներդիրները մշակվում են անջրաթափանց կտորով երկկողմանի մգդակարված առնավզը 300 գրամ/մ² խտությամբ սինտեպոնով, իսկ թևքերը և գլխանոցը՝ անջրաթափանց կտորով երկկողմանի մգդակարված առնվազը 200 գրամ/մ² խտությամբ սինտեպոնով: Աստառը 70-100 գրամ/մ² մակերեսային խտությամբ սև գործվածքից: Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Օձիքը կտրված կանգունակով, որի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնին 5 հատ 15մմ տրամագծով կոճգամներով ամրանում է գլխանոցը: Գլխանոցի ստորին հատվածում՝ լայնացող վերջավորություններին, մշակված են սև կպչուն ժապավեններ, որոնք միանում են իրար կենտրոնական կոճկվածքի ուղղությամբ: Բաճկոնը կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ երկկողմանի սև երիզաշղթայով և երեքական կպչուն ժապավեններով: Կպչուն ժապավենները ձախ լանջափեշին մշակվում են ներսի կողմից, իսկ աջ լանջափեշին արտաքին կողմից՝ եզրակարից 1սմ հեռավորությամբ: Բաճկոնի ստորին եզրաշերտով անցնում է քուղ՝ ելքային մասերում 7+/-1սմ կախված վիճակում, ծայրերը պլաստիկ բռնակներով: **Բաճկոնի կենտրոնական եզրաշերտի վրա՝ վերևից 15 սմ ներքև, ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,5սմ լայնությամբ պատա՝ 7X5սմ կոչման տարբերանշանի համար, ներքևի ծայրը եզրաշերտին ամրացվում է սև գույնի կպչուն ժապավենով:**

Կրծքամասում մշակված են երկու վրադիր ծավալուն գրպաններ 14+/-1սմ լայնությամբ և 16+/-1սմ երկարությամբ, կափույրներով: Կափույրների վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, կարվում են 13X2.5 սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեններ: Ձախ գրպանի կափույրի վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, տեղադրվում է 13X2.5սմ չափով սև գույնի՝ վրան ասեղնագործված «արյան կարգ»-ը տարբերանշանը, իսկ աջ գրպանի կափույրի վրա «MES OF ARMENIA» տարբերանշանը: Կրծքամասի ձախ գրպանի կենտրոնում՝ ստորին եզրակարից 2սմ բարձրության վրա ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորխորդանշանը՝ շրջանաձև, 8սմ տրամագծով: Բաճկոնի աջ և ձախ կրծքամասերում մշակված են 14սմ լայնությամբ և 16սմ երկարությամբ ծոցագրպաններ՝ շերտիկով:

Առաջամասում մշակված են թեք կողային գրպաններ՝ երկկողմանի սև երիզաշղթայով փակվող: Երիզաշղթան մշակվում է գրպանի եզրից 1-1,5սմ խորությամբ՝ ներսի կողմից:

Աջ թևքին՝ ուսագլխից 8սմ ներքև, ասեղնագործված է ՓԾ թևքանշանը, ձախ թևքին՝ ուսամասից 3սմ ներքև, ՀՀ եռագույնը կիսակլոր՝ ներքևում «ՀԱՅԱՍՏԱՆ», որից 1 սմ ներքև ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը: Բազկակալները մշակված են եզրաշերտերի միջով անցնող 5-6սմ լայնության ռետինե էլաստիկ ժապավեններով: Օձիքի մորթին առնվազը

800 գրամ/մ² խտությամբ, խավի բարձրությունը՝ ոչ պակաս 12մմ, գույնը սև, կոճկվում է բաճկոնին լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 15մմ տրամագծով կոճակներով: Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով: Բաճկոնի վրա կատարվող բոլոր ասեղնագործման աշխատանքները կատարվում են լազերային <Jakard> եղանակով, պատկերների համաչափության պահպանմամբ:

Բաճկոնի չափսերը և տարբերանշանների կոչումները կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

Բաճկոնի կոչման տարբերանշանը արտադրվում է համազգեստի գործվածքից՝ հանովի օղագոտու տեսքով: Արտաքին չափսերը՝ 7X5սմ: Թույլատրելի շեղումը +/- 2%: Աստղերը հնգաթև, ուռուցիկ, ռելեֆավոր, ոսկեգույն, 13 և 20մմ տրամագծերով, հարթանիստ: Աստղը փակցնելու համար ներսի կողմից ամրացվում է արույրե 0.5մմ հաստության ճկուն թիթեղից 15մմ երկարության բեղիկներ:

Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ-ոց աստղեր.

Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա 13մմ-ոց:

Աստղերը պետք է տեղակայվեն հետևյալ կերպ՝

Գնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից:

Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի:

Մայոր – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղի կենտրոնը 45մմ:

Կապիտան – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 20մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը 20մմ հեռավորությն վրա՝ երրորդի կենտրոնից:

Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից:

Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի:

Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 20մմ, երկրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից:

Ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25մմ, երկրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից:

Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն ուղղահայց դիրքով:

Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն հորիզոնական դիրքով:

Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա:

Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա:

Փաթեթավորումը ստվարաթղթե պիտակավորված արկղերով և պարկերով, արկղում յուրաքանչյուր բաճկոն թափանցիկ պոլիէթիլենային պարկով: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասծանության սերտիֆիկատ՝ գործվածքի և մորթաթաղանթի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից:

6. Ձմեռային կեպի – Գործվածքի մակերեսային խտությունը առնվազը 215 գրամ/մ², բաղադրությունը՝ 49±2% պոլիէսթեր, 51±2% բամբակ, գործվածքի տեսակը՝ <Սարժա>, ներկման մեթոդը՝ <Ռեակտիվ> մշակված անջրաթափանց ծածկույթով, գույնը՝ մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն): Բաղկացած է կոշտ հովիարից,

միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալ-ծոծրակամասից, որը մշակված է առնվազը 800 գրամ/մ² մակերեսային խտությամբ, սև գույնի գործվածքային մորթաթաղանթով: Հովհարին միջադրված է առնվազը 3մմ հաստության պլաստիկ ճկվող միջադիր, իսկ եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Կողամասերը մշակվում են առնվազն 3մմ հաստության սոսնձային կտորից միջադրով:

Գլխարկաբոլորքի բարձրությունը ճակատային մասում սկսած 54 չափսից 7,6սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը սկսած 54 չափսից 8,2սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ (թույլատրելի շեղում +/-1մմ): Գլխարկաբոլորքի կենտրոնում լազերային՝ <<Jakard>> եղանակով ասեղնագործված է <<ԱԻՆ>> խորհրդանշանը՝ շրջանաձև, 56+/-1մմ տրամագծով, սև կտորի վրա գունավոր ասեղնագործված: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում 7+/-0.3սմ: Գլխարկահատակի կենտրոնում՝ ներսի կողմից, դրոշմվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: **Չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:**

Փաթեթավորումը՝ գործարանային պիտակավորված արկղերով: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված՝ առանձին շարվածքով: Պիտակի վրա նշվում է տեսականու անվանումը, քանակը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: **Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի և մորթաթաղանթի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից:**

11. Աշխատանքային համազգեստի լրակազմ – Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից և կեպիից: Գործվածքի մակերեսային խտությունը առնվազը 210գրամ/մ², բաղադրությունը՝ 49±2% պոլիէսթեր, 51±2% բամբակ, գույնը մուգ փիրուզագույն: Գործվածքի տեսակը <<Սարժա>>, ներկման մեթոդը <<Ռեակտիվ>>: 30°C ջերմաստիճանի ջրով 5 անգամ լվալուց հետո թույլատրելի նստումը (հորիզոնական և ուղղահայաց)՝ 2%-ից ոչ ավել:

Բաճկոնը՝ միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ 5 օղակ կոճակներով, որոնից վերևից առաջինը բաց կոճկվածքով, իսկ մյուս 4-ը գաղտնի: Բաճկոնն ունի 5+/-0,5սմ լայնությամբ, ծալովի, ուղղանկյունաձև կանգունակով օձիք, որի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են 3 ծավալուն գրպաններ՝ կափույրներով, որոնցից մեկը կրծքամասի ձախ հատվածում, երկուսը առաջամասի կողային հատվածներում: Կրծքամասի գրպանը՝ 14+/-1սմ լայնությամբ և 16+/-1սմ երկարությամբ, տեղակայված կենտրոնական ուղղահայաց կարից 4+/-1սմ հեռավորության վրա, 12սմ լայնությամբ կափույրով, ռադիոկապի համար: Կրծքամասի աջ կողմում և ձախ կողմի գրպանի կափույրի վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, կարվում են 13X2.5 սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեններ: Ձախ գրպանի կափույրի վրա տեղադրվում է 13X2.5սմ չափով՝ վրան սպիտակ թելով ասեղնագործված «արյան կարգ»-ը տարբերանշանը, իսկ աջ կողմում՝ նույն ուղղությամբ, «MES OF ARMENIA» տարբերանշանը: Կափույրները գրպաններին են ամրանում երկուական կպչուն ժապավեններով:

Առաջամասի կողային վրաղիր գրպանները՝ 16-17սմ լայնությամբ և 19-20սմ երկարությամբ, կափույրների լայնությունը 6սմ: Գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 3սմ բարձրության վրա, որոնք կափույրներին ամրանում են երկուական 3X2.5սմ չափի, սև կպչուն ժապավեններով: Գոտկատեղում մշակված են 4 սմ լայնությամբ 2 ախլակներ՝ իրանի չափսերի կարգավորման համար, կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Բաճկոնի ստորին եզրի ամբողջ երկայքով մշակված է բուդ՝ առնվազը 5մմ տրամագծով, ծայրերը պլաստիկ բռնակներով:

Թևքերի վերջավորություններում մշակված են ուղղանկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Աջ թևքին՝ ուսագլխից 8սմ ներքև, ասեղնագործված է ՓԾ թևքի տարբերանշանը, ձախ թևքին՝ ուսամասից 3 սմ ներքև, ՀՀ եռագույնը կիսակլոր՝ ներքևում «ՀԱՅԱՍՏԱՆ», որից 1 սմ ներքև ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը: Բաճկոնի վրա կատարվող բոլոր **ասեղնագործման աշխատանքները կատարվում են լազերային <Jakard> եղանակով, պատկերների համաչափության պահպանմամբ:** Բաճկոնի կենտրոնական եզրաշերտի վրա՝ վերևից 15 սմ ներքև, ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,5սմ լայնությամբ պատա՝ 7X5սմ կոչման տարբերանշանի համար, ներքևի ծայրը եզրաշերտին ամրացվում է սև գույնի կպչուն ժապավենով: Բաճկոնի ամբողջ երկայնքով՝ մինչև թևքերի միացման կարը, օձիքի միացման կարից 10-11սմ հեռավորությամբ, անցնում է 4+/-0.2սմ լայնությամբ լուսանդրադարձիչ արծաթագույն ժապավեն, իսկ ժապավենից 2,5սմ ներքև՝ կենտրոնական հատվածում, արծաթագույն լուսանդրադարձիչ նյութով, 4X3,5սմ չափսով գրված է <ԱԻՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>:

Տաբատը՝ ուղիղ ձևվածքով, մշակված գոտիով, առաջամասում կողային թեք ներկարված գրպաններով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին մշակվում է 6 կամրջակով և գոտու չափը կարգավորող 3սմ լայնությամբ և 8սմ երկարությամբ ներկարված 2 ախլակներով՝ իրանի չափսերի կարգավորման համար, կոճկվում են 1 օղակով և 2 կոճակներով: Տաբատի կողային հատվածներում՝ ծնկամասից վերև մշակված են ծավալուն վրաղիր

գրպաններ՝ 20+/-1սմ լայնությամբ և 22+/-1սմ երկարությամբ, կափույրներով: Ծալքերի լայնությունը 2+/-0.5սմ, ներքևից 1,5սմ ամրակարված: Տաբատի ետնամասի աջ կողմում ներկարված է 15Х15սմ չափի գրպան՝ կափույրով: Կափույրները կոճկվում են երկուական սև գույնի կպչուն ժապավեններով: Փողկերի ամբողջ երկայնքով՝ ծնկամասից 8-9սմ ներքև մշակված են մեկական 4+/-0.2սմ լայնությամբ, լուսանդրադարձիչ արծաթագույն ժապավեններ:

Համազգեստի միացման բոլոր կարերը իրականացվում են **շղթայական փակ զույգ կարերով**: Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամագծով, 4 կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկկողմանի կարվող, գույնը սև:

Կեպին՝ աստառով, կազմված կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են առնվազն 3մմ հաստության սոսնձային կտորից միջադրով: Հովհարը միջադրված է առնվազը 3մմ հաստության պլաստիկ, ճկվող միջադրով և միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարի եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Կեպիի կողային մասերի կենտրոնում մշակված են երկուական անցքեր՝ օդափոխության համար, ասեղնագործված եզրակարով: Գլխարկաբոլորքի բարձրությունը ճակատային մասում սկսած 54 չափսից 7,6սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ (թույլատրելի շեղում +/-1մմ): Ծոծրակամասի բարձրությունը սկսած 54 չափսից 8,2սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ (թույլատրելի շեղում +/-1մմ): Գլխարկաբոլորքի կենտրոնում մշակված է <<ԱԻՆ>> խորդրդանշանը՝ շրջանաձև, 56+/-1մմ տրամագծով, սև կտորի վրա լազերային՝ <<Jakard>> եղանակով ասեղնագործված: Գլխարկաբոլորքի դիմային ստորին հատվածով անցնում է 20+/-2մմ լայնությամբ ժապավեն: Հետնամասում երկկողմանի մշակված է բաց շագանակագույն պլաստմասե չափսի կարգավորիչ: Աստառի ճակատային մասը մշակված է 5.7Х4.5սմ չափի արհեստական կաշվով: Գլխարկահատակի կենտրոնում դրոշմվում է չափսը և արտադրողի անվանումը:

Համազգեստի չափսերը՝ կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

Բաճկոնի և տաբատի ներսամասում մշակվում է խնամքի վերաբերյալ պիտակ՝ վրան նշված.

Արտադրողի անվանումը. Չափս-հասակը. Լվացքի մեքենայով կամ ձեռքով լվանալու ջրի ջերմաստիճանը մինչև 30°C:

Լվանալ գունավոր հագուստի համար նախատեսված լվացքի նյութերով:

Պարզաջրել գոլ ջրով, չմզել անհրաժեշտության դեպքում արդուկել ցածր ջերմաստիճանով:

Չ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՍՊԻՏԱԿԵՑՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ. ՊԻՏԱԿԸ Չ՝ ՀԵՌԱՑՆԵԼ

Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով, արկղում յուրաքանչյուր լրակազմը պոլիէթիլենային պարկով, յուրաքանչյուր արկղում մեկ չափս: Արկղերը և պարկերը պիտակավորված՝ պիտակի վրա նշված տեսականու անվանումը, քանակը, չափս-հասակը, արտադրողի անվանումը:

Կեպիներն առանձին արկղերով չդեֆորմացված, առանձին շարվածքով: **Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8	Արարատի մարզ, ք. Մասիս 1 փողոց,
ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ, Մասիսի մ/Ճ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 03804898
Վ. Ծառեյան	Վ. Երիտզարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«21» 02 2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	35811180/501	Հատուկ հանդերձանք և պարագաներ / Ամենօրյա համազգեստի լրակազմ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
2	18231600/501	Սվիտերներ / Մայկա կապույտ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
4	18811210/501	Ճտքավոր կոշիկներ / Կոշիկ ճտքավոր	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
5	18221300/501	Գլխարկով բաճկոններ / Ձմեռային բաճկոն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
6	18441160/501	Կեպիներ / Կեպի ձմեռային	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

11	18111200/501	Կոմբինիզոն աշխատանքային	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամորտական կարգով:*

ԳՆՈՐԴ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247

Վ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Արարատի մարզ, ք. Մասիս 1 փողոց,
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մասիսի մ/ճ
Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 03804898

Վ. Եղիազարյան
/ստորագրություն/
Կ.Տ

«21» 02 Հավելված N 3
2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

„21„ 02 Հավելված 3.1
2020թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն